ՍԻՍԻԱՆ

ՖեստիՎալ

ՀԱՅԱՍՏԱՆ

«Ֆեստիվալ» երաժշտական փառատոնի տարբերանշանը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավից:

Սարյանական վառ և արտահայտիչ գույները փոխանցում են հայաստանյան վառ ամառային տրամադրությունը՝ «Ֆեստիվալ»-յան շունչը: Այս տարի լրանում է կտավի ստեղծման 100-ամյակը:

ԿԳՄՍ նախարարությունը և Առաջին ալիքը հրավիրում են քեզ Սիսիան՝ համտեսելու տեղական արտադրանքը, այցելելու թաքնված և հայտնի անկյուններն ու վայելելու համերգային ծրագիրը:

ՍԻՍԻԱՆ, ՕԳՈՍՏՈՍԻ 26

15:00 - Տեղական արտադրանքի տոնավաճառ
Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսակ Նահապետի հրապարակին հարակից տարածքում

17:00 - Համերգ տեղացի արտիստների մասնակցությամբ և հյուր արտիստներ Երևանից՝ «Թմբաթա», «The Boing Orchestra»

20:00 - Մեծ համերգ
Գրիշա Աղախանյան՝ «Top 10 of Rabiz» ծրագիր
Գարիկ և Սոնա

22:00 - DJ

Ո՞ՒՐ ԳՆԱԼ ՍԻՍԻԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Նիկողայոս Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարանը հիմնադրվել է 1990 թվականին: Թանգարանում ցուցադրված են 1990 թ.-ից հետո Սիսիանում կատարված հնագիտական ուսումնասիրությունների նյութերը, բազմաթիվ գտածոներ, Սյունիքի գորգերի հարուստ հավաքածու, բազմաթիվ այլ նյութեր:

Հասցե՝ ք. Սիսիան, Ադոնցի փող., 6ա շենք
Աշխ. ժամեր՝ 09:00-18:00

Հայաստանի ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղը գործում է 1996 թվականից: Պատկերասրահում ներկայացված են 19-րդ դարավերջի և 20-րդ դարի հայ անվանի գեղանկարիչների, քանդակագործների (Մ. Սարյան, Փ. Թերլեմեզյան, Ա. Կալենց, Հ. Հակոբյան, Գ. Խանջյան, Հ. Գյուրջյան, Մ. Աբեղյան և այլն) աշխատանքները:

Հասցե՝ ք. Սիսիան, Սիսական փող., 23 շենք
Աշխ. ժամեր՝ 09:00-18:00

Որոտանի կիրճում գտնվող Աղիտուի քարանձավում պեղումների արդյունքում հայտնաբերվել են վերին պալեոլիթի ժամանակաշրջանում կայծքարից ու օբսիդիանից պատրաստված քարե գործիքներ: Ըստ հնագետների՝ մարդիկ այս քարանձավներում բնակվել են 40-26 հազար տարի առաջ: Քարանձավները եղել են քարեդարյան որսորդների կացարաններ:

Աղիտուի հուշարձանը գտնվում է Աղիտու գյուղի կենտրոնում: Հուշարձանը 7-րդ դարի եռահարկ կառույց է: Ըստ ավանդության՝ առաջին հարկաբաժնում ամփոփված են թշնամիների դեմ կռվում զոհված երկու իշխանազուն եղբայրների աճյունները: Շրջակայքը հարուստ է հնագիտական հուշարձաններով, որոնք վկայում են, որ այստեղ հեթանոսական շրջանի պաշտամունքային կառույց է եղել:

Արզումանի կամուրջը կառուցել է Հայրապետ վարպետը 1675 թ.: Արզումանի կամուրջը միակամար գեղեցիկ հորինվածք է: Կամարը շինված է սրբատաշ, իսկ օժանդակ մասերը՝ կոփածո և բոլորովին անտաշ քարերով: Կամրջի աջ ափը հենված է քարաժայռերի վրա, իսկ ձախը ցածր է եղել և բարձրացված է արհեստական պատնեշով ու թմբով:

Մելիք Թանգու կամուրջը կառուցել է Սյունյաց մելիք Թանգին 1855 թ.: Կամրջի շինարարության ժամանակ օգտագործվել են շրջակայքում եղած՝ ավելի վաղ շրջանի ավերված եկեղեցու և գերեզմանատան քարերը: Կամուրջը գտնվում է անմիջապես Որոտնաբերդի քարաժայռի տակ:

Շաքիի ջրվեժը գտնվում է Որոտան գետի ձախակողմյան վտակի վրա:
Ջրվեժի անունը կապվում է մի աղջկա հետ: Ըստ ավանդության՝ թշնամիները 93 երիտասարդ աղջիկների այստեղով տանում են իրենց առաջնորդի մոտ: Երբ հասնում են ջրվեժին, աղջիկները խնդրում են թույլ տալ լողանալ, նրանք նետվում են Որոտանի ալիքների մեջ և սուզվելով անհետանում: Միայն Շաքե անունով մի կապուտաչյա աղջիկ, Որոտանը թափվող գետակի միջով փախչելով, փորձում է ազատվել: Թշնամիները հասնում են նրան, սակայն նույն վայրկյանին գետակի մեջ հրաշքով մի ժայռ է խոյանում, և ջուրը, նրա վրայով գահավիժելով, իր ճերմակ փրփուրների տակ թաքցնում է Շաքեին: Դրանից հետո այդ ջրվեժն ու նրա մոտ գտնվող գյուղը կոչվում են Շաքեի անունով:

Շամբի ջրամբարը հիանալի ձկնորսական վայր է՝ նպաստավոր նաև լողի և հանգստի համար: Ջրամբարը, բացի հիմնական՝ էներգաարդյունաբերական նշանակությունից, կիրառվում է նաև ոռոգման համար: Այս ջրամբարը հայտնի է հատկապես ծաղկի տեսքով կառուցված ջրահեռացման համակարգով, որին տեղացիները տվել են «Մարգարիտկա» անվանումը:

Սբ. Գրիգոր եկեղեցին (Սյունի վանք, Սբ. Հովհաննես եկեղեցի, Սիսավան) գտնվում է Սիսիանի հյուսիսարևմտյան մասում: Ըստ պատմիչ Ստ. Օրբելյանի՝ վանքը կառուցել է Սյունյաց տիկին Վարազդուխտը՝ սբ. Լուսավորչի անունով: Վանքի առջև գտնվել է Սյունյաց իշխանների ապարանքն ու արքունական տունը: Սյունի վանքը կառուցվել է հեթանոսական տաճարի հիմքի վրա. դա փաստվում է նրա անունով (Սյունի՝ «լույս, արև»), շրջակայքի՝ Ք.ա. 3-1-ին հազ. թվագրվող դամբարանադաշտով, ինչպես նաև կից Ծակ քարի կիկլոպյան բերդատեղիով:

Զորաց քարեր (Դիք-դիք քարեր, Քարահունջ) հնագույն մեգալիթյան համալիրը հողի մեջ ուղղահայաց կանգնեցված 223 քարերից կազմված մենհիրների դաշտ է: Ըստ լեգենդի՝ այստեղ թաղված են եղել նշանավոր զինվորականներ, անցկացվել են տարբեր ծիսակարգեր: Սակայն մի շարք ֆիզիկոսներ և աստղագետներ այն կարծիքին են, որ այն եղել է պաշտամունքային կենտրոն՝ նման անգլիական Սթոունհենջին, որը ծառայել է նաև որպես աստղադիտարան:

Որոտնաբերդը գտնվում է Սիսիանից 20 կմ արևելք: Բերդն ունի հյուսիս-արևմուտք - հարավ-արևելք ձգվածությամբ թամբի ձև: Երեք կողմից երիզված է Որոտանի կիրճով, պարսպապատված է եղել միայն հարավ-արևմուտքից: Հարավ-արևելքում մոտ 50 մ բարձր միջնաբերդն է: Միջնաբերդի արևելյան մասում կան կիսաշրջանաձև պատով դիտաշտարակի, մատուռի մնացորդներ: Այստեղ է գտնվել դեպի Որոտան գետ տանող գետնուղու գլխամասը:

Որոտնավանքը (Վաղատնի վանք) գտնվում է Սյունիքի մարզի Վաղատին գյուղից 2 կմ հարավ-արևելք: Վանքը 1000 թ. հիմնադրել է սյունյաց թագուհի Շահանդուխտը: Վանքի շրջակայքում կառուցվել է նաև աղոթարան, արհեստանոցներ, պահեստներ և վանքը շրջափակել է պարսպով: Վանքի քարերին պահպանվել են Օրբելյանների տան ներկայացուցիչների թողած արձանագրությունները (14-րդ դար):

Ուխտասարի ժայռապատկերները գտնվում են Սիսիանից մոտ 25 կմ հյուսիս՝ Սև և Ալ լճերի միջև ընկած տարածքում: Ժայռապատկերները մոտավորապես թվագրվում են Ք.ա. 5-2-րդ հազարամյակներով: Պատկերում են մարդկանց՝ որսի, աշխատանքի, կրոնական ծեսերի պահին, վայրի և ընտանի կենդանիների, երկնային լուսատուների, քիչ չեն նաև անբացատրելի գծանկարներն ու ուրվագծերը:

Տաթևի վանական համալիրը գտնվում է Սիսիանից 35 կմ հարավ: Վանքում գործել է Տաթևի նշանավոր համալսարանը և մանրանկարչության ու գրչության դպրոցը: Վանքն ունեցել է խոշոր մատենադարան: Այստեղ է գտնվում Գրիգոր Տաթևացու դամբարանը: Տաթևը հանրահայտ է նաև իր ճոճվող խաչքարակիր-գավազանով: Վանքը ներկայումս Սյունյաց թեմի հոգևոր կենտրոնն է:

ԿԵՑԱՎԱՅՐԵՐ ՍԻՍԻԱՆՈՒՄ

«ԼԱԼԱՆԵՐ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 28 32 66 00
+374 91 48 16 06
Սիսիան, Սիսական 29

«ՍՅՈՒՆԻՔ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 77 32 72 90
Վաղատին, փողոց 1, տուն 74

«ԲԱՍԵՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 93 43 47 27
+374 93 01 46 62
Սիսիան, Ա. Մանուկյան 2

«ՄԱՐԻԱՆԱ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 77 62 43 34
Սիսիան, Լալայան 11

«ԴԻՆԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 93 33 43 92
Սիսիան, Սիսական 35

«ԱՁՈՅԱՆ ՀՈԼԻԴԵՅ» ՀԱՆԳՍՏԻ ԶՈՏԻ
+374 93 20 17 28
Սիսիան-Շաքի խճուղի, տուն 1

«ԱՎԵ ՁԱՌԱ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 38 63 66
Վաղատին, փ. 8, տուն 25

«ԴՐԻՍԼԵԹ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 66 18 22
Սիսիան, Իսրայելյան 17

«ԷՄ ՁԵՅ ԷՅ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 77 28 02 29
Հացավան, Գետափնյա
թաղամաս 1

«ՄԻՏԱՆԵ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 88 42 73
Սիսիան, Օրբելու 7

«ՖԼԱՄԵՆԿՈ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 93 55 05 18
+374 94 60 90 40
Սիսիան, Որոտանի 1/1

«ԴԱՎԻԹ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 77 33 39 70
Սիսիան, Սայաթ-Նովայի 29

«ՖԼՈՐԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 77 41 42 77
Սիսիան, Գայի 1

«ԴԱՎԹԻ ՏՈՒՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 77 03 66 50
Աղիտու, փողոց 3, տուն 24

«ԿԱՐԻՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 26 25 33
Սիսիան, Անդոկ
իշխանի գավիթ 3/1

«ՆԱՏԱԼԻ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 77 44 41 08
Վաղատին, փողոց 8, տուն 6

«ՁՈՐԱՑ ՔԱՐԵՐ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 98 88 09
Սիսիան, Նելսոն Ստեփանյան 29

«ՇԱՄԲ» ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 93 95 52 52
Շամբ, փողոց 1, խանութ 35

«ՈՐՈՏՆԱՎԱՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 77 56 15 77
Որոտնավան, Որոտնավանի փ. 9/1

«ԱՆԻ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 98 44 17 11
+374 94 63 19 78
Սիսիան, Սիսական 42 1/2

«ՌՈՒՆԱԴԱ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 59 04 90
Սիսիան, Գեորգի Առուստամյան 28

«ՎԱՂԱՄԱՐ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 94 28 80 00
Սիսիան, Գ. Նժդեհի 4/22

«ԱՐԵՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ | +374 93 90 69 00 | Սիսիան, 3-րդ փողոց, տուն 33

ՍՐՃԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐ ՍԻՍԻԱՆՈՒՄ

«ԿՈՆԴ»
Ռեստորան
+374 94 63 60 09, +374 77 63 60 29
Սիսիան, Դուրյան 1

«ՈՐՈՏԱՆ ՊԱՆԴՈԿ»
+374 94 92 82 82
Սիսիան, Որոտանի 1/1

«ՏԱՏՆԻ»
Ռեստորան
+374 99 33 37 00
Սիսիան, Երևան-Մեղրի M2 մայրուղի,
Շաքիի խճուղի, շենք 7

«ՎԵՐԴԵ»
Ռեստորան
+374 77 20 60 45
Սիսիան, Կամոյի 9

«ԿՅԱԺԻ ՄՈՏ»
Ռեստորան
+374 94 90 61 36
Սիսիան, Շիրակի 1/3

«ՖԼՈՐԱ»
Ռեստորան
+374 77 41 42 77
Սիսիան, Գայի 1

«ԶՐԱՀԱՐՍ»
Ռեստորան
+374 94 86 68 08
Սիսիան, Ռ. Իսրայելյան 6/9

«ՖԼԱՄԵՆԿՈ»
Սրճարան
+374 93 55 05 18, +374 94 60 90 40
Սիսիան, Որոտանի 1/1

«ՍԻՍԻԱՆ» ՊԱՆԴՈԿ
+374 33 00 33 22
Սիսիան, Չարենցի 1

«ԷՄ ՁԵՅ ԷՅ»
Ռեստորան
+374 77 28 02 29
Հացավան, Գետափնյա 1

«ԱՎ-ՏՈՒՐ»
Ռեստորան
+374 93 44 11 55
Սիսիան, Չարենցի 10

«ԲԱՍԵՆ»
Ռեստորան
+374 93 43 47 27, +374 93 01 46 62
Սիսիան, Արամ Մանուկյան 2

«ՎԵԳԱ»
Սրճարան
+374 44 59 55 75
Սիսիան, Սիսական 33

«ԼԱԼԱՆԵՐ»
Ռեստորան
+374 28 32 66 00, +374 91 48 16 06
Սիսիան, Սիսական 29

«ՎԱՆ ՊԱՆԴՈԿ»
+374 93 97 91 99
Սիսիան, Իսրայելյան 39

«ԱԼՎԻՆԱ»
Ռեստորան
+374 43 14 07 07
Սիսիան, Իսրայել Օրու 11

«ՄԱՍՐԵՆԻ»
Ռեստորան
+374 98 66 22 66
Դարբաս բնակավայր

«ԽՆՁՈՐԻ ԱՅԳԻ»
Ռեստորան
+374 95 09 00 10
Շաքի, Ձորամեջի 3/1

«ՄԱՆՎԵԼԻ ՄՈՏ»
Ռեստորան
+374 93 77 00 40
Դարբաս բնակավայր, Շաքիի խճուղի

«ՍԻՍԻԱՆ ԿԵՐԱՄԻՔՍ»
Գաստրոբակ
+374 93 61 56 61
Սիսիան, Գրիգոր Լուսավորչի 42

«ՈՐՈՏՆԱՎԱՆ» Ռեստորան | +374 77 56 15 77 | Որոտնավան, Որոտնավանի փ. 9/1

Օգոստոսի 26-ին «ՖԵՍՏԻՎԱՌ» երաժշտական
փառատոնը կգունավորի Սիսիանի ամառային երեկոն,
կմեկտեղվեն Սիսիանի բնությունն ու յուրօրինակ
երաժշտական ռիթմերը: